Զավեն Հարոյան
Եվրասիա միջազգային համալսարանի Կառավարման ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու

ՈՒՂԻՂ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ժողովրդավարության հիմնադրույթն է, որ այն ամեն մի ընտրողի հնարավորություն է տալիս անելու ինչ-որ մի հիմարություն:

Արթ Սպանդեր

Սույն հոդվածում ներկայացված է աշխարհում ներկայացուցչական ժողովրդավարության արձանագրած հետընթացը վերջին ժամանակաշրջանում և որպես գործնական օրինակ՝ Հայաստանում դրա ֆորմալ ձևով դրսևորման ընթացքը: Որպես ժողովրդավարության իրագործման կամ դրա մակարդակի բարձրացման լուծում հեղինակը առաջարկում է ներդնել ուրույն մշակված ուղիղ ժողովրդավարության կիրարկման համակարգ՝ դրա համապատասխան կառուցակարգերով և գործիքակազմով:

Հիմնաբառեր: ժողովրդավարություն, ներկայացուցչական ժողովրդավարություն, ուղիղ ժողովրդավարություն, մերիտոկրատիա, էպիստոկրատիա

Ներածություն

Ներկա աշխարհաքաղաքական զարգացումները և դրանց դրսևորումները ըստ երկրների դիտարկելուց կարելի գտնել այնպիսի ընդհանրություն, ինչպիսին է հանրային կառավարման մեխանիզմների արդյունավետության նվազումը և որպես դրա հետևանք՝ իշխանության նկատմամբ ժողովրդի վստահության մակարդակի շարունակական անկումը: Այլ կերպ ասած, ժողովրդավարության գործող մոդելները և դրա համապատասխան ինստիտուտները այսօր ինչ-որ չափով և առումներով ճգնաժամ են ապ-

րում և կարիք ունեն հիմնարար բարեփոխումների: Շուրջ երեք տասնամյակ Հայաստանի կողմից որդեգրած ներկայացուցչական ժողովրդավարության գաղափարի իրագործման գործընթացը եղել է ձևախեղված, իսկ դրա հանրային և պետական ընկալումը ոչ ամբողջական և սուբյեկտիվ: Ուստի, ժողովրդավարության թույլատրելի աստիճանը սահմանվել է այնպիսի մակարդակում, որը չէր խանգարի գործող իշխանությունների պարզ վերարտադրության գործընթացին:

Այնուամենայնիվ, «դասական» իմաստով ուղիղ ժողովրդավարության իրագործման միջոցով տեղի ունեցած հեղափոխության և լեգիտիմ իշխանության առկայությունը ներկայացուցչական ժողովրդավարության պայմաններում անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է ժողովրդի իշխանության արդյունավետ և շարունակական կիրարկման համար:

Տեսական հիմքերը

Ուսումնասիրությունն իրականացվել է տվյալների ուսումնասիրության, օբյեկտիվության, փաստերի գնահատման սկզբունքների հիման վրա: Օգտագործվել են համակարգային, պատճառա-հետևանքային, միջազգային փորձի գնահատումները և համեմատությունը ու տրամաբանական վերլուծությունների մեթոդները:

Ներկայացուցչական ժողովրդավարության բացթողումները

Ժողովրդավարության գործող մոդելները և ինստիտուտները ժամանակի որոշակի հատվածում հասարակական զարգացման արագ տեմպերի պայմաններում անհրաժեշտ չափով չեն ապահովում դրա կիրարկման բարձր արդյունավետությունը, ուստի և առաջ է գալիս ժողովրդավարության իրացման կառուցակարգերի շարունակական բարեփոխումների անհրաժեշտություն: Պատահական չէ, որ իշխանությունների նկատմամբ դժգոհությունների ալիքը վերջին տասնամյակում տարբեր երկրներում հետզհետե մեծանում է և ժողովրդավարությունը հետևողականորեն հետընթաց է գրանցում:

Սամուել Հանթինգթոնի (1991) նախանշած «ժողովրդավարության վերջին ալիքը» սկսվեց 1974թ.-ից և տևեց մոտ երեք տասնամյակ: Երբ այս ալիքը սկսվեց, անկախ երկրների միայն 30% էր համապատասխանում «ընտրական դեմոկրատիայի» չափանիշին (համակարգ, որտեղ քաղաքացիները համընդհանուր քվեարկությամբ ընտրում կամ փոխարինում են իրենց լիդերներին կանոնավոր, ազատ, արդար և նշանակալի ընտրությունների միջոցով): Համաձայն Freedom House[1]-ի զեկույցի այդ երեք տասնամյակում ժողովրդավարությունը հետևողականորեն արձանագրում էր աճ նույնիսկ այսպես կոչված «հարաբերական ավտորիտար» երկրներում: Համաձայն այս կառույցի կողմից հրապարակվող «ազատությունը աշխարհում» ամենամյա զեկույցի, որը յոթ բալանոց սանդղակով (որտեղ 1-ը ամե-

1 Քաղաքական և քաղաքացիական ազատությունները հետազոտող ոչ պետական կառույց

նաազատն է, 7-ը՝ ռեպրեսիվը) հաշվում է քաղաքական իրավունքները և քաղաքացիական ազատությունները, աշխարհում ազատության միջին ինդեքսը բարելավվել է 1974թ.-ի 4.38-ից հասնելով իր պիկին՝ 2005թ.-ի 3.22 մակարդակին: 2006թ.-ին երկրների 60%-ը համապատասխանում էր «ընտրական դեմոկրատիայի» չափանիշին, սակայն վերջին տասներկու տարում ազատության միջին ինդեքսի ցուցանիշը շարունակական հետընթաց է արձանագրել՝ հասնելով 3.3-ի: Չի բացառվում, որ սա հենց երրորդ ալիքի ռեվերս (հակադարձ) ալիքն է, որը բնորոշ էր ժողովրդավարացման առաջին և երկրորդ ալիքներին: Այսպես, վերջին տասնամյակում աճել է ոչ ազատ երկրների թիվը և նվազել ազատ երկրներինը:

Գծապատկեր 1. Ազատության կառուցվածքի դինամիկան



Աղբյուրը՝ www. Freedomintheworld.org

Զարգացվածության տարբեր բաշխվածությամբ բոլոր աշխարհամասերից առանձնացված 38 երկրներում կատարած հետազոտության համաձայն, ընդհանուր առմամբ ժողովրդավարության դրսևորումից գոհունակության միջինացված գնահատականը (46%) փոքր-ինչ զիջում է դրանից դժգոհության գնահատականին (52%):

Գծապատկեր 2. Հասարակության բաժանումը ըստ ժողովրդավարությունից բավարարման ընտրություններին



Աղբյուրը՝ Pew Research Center (2017)

Ժողովրդավարության դրսևորման առավել մտահոգիչ ցուցիչ է հանդիսանում աշխարհով մեկ ընտրություններին մասնակցության ցուցանիշի անընդհատ նվազումը: Այդ ցուցանիշը, հատկապես Եվրոպայում (Diamond. L, 2015) ի թիվս այլ գործոնների վկայում է «հիվանդ» ժողովրդավարության մասին:

Գծապատկեր 3. Ընտրություններին մասնակցության դինամիկան աշխարհում



Աղբյուրը՝ Voter Turnout Database, www.idea.int/data-tools/data/voter-turnout

Նշվածից բնավ չի հետևում, որ ժողովրդավարական ուղիով զարգացումը սխալ է և այն ունի այլընտրանք: Հաշվի առնելով, որ ժողովրդավարությունը շարունակական գործընթաց է և ավելի շատ ուտոպիստական գաղափար՝ դժվար է պնդել, որ այն հասել է իր զարգացման գագաթնակետին, և որ այլևս հնարավոր չէ գրանցել առաջընթաց: Իհարկե, չի կարելի նաև պնդել, որ պակասել է դրա նկատմամբ կարիքը: Ավելի հավանական է, որ դրա իրացման կառուցակարգերը հնացած են և կարիք ունեն մեթոդական և գործնական ծանրակշիռ բարեփոխումների:

«Pew Research» կենտրոնի կատարված հետազոտության համաձայն[1], ներկայացուցչական և ուղիղ ժողովրդավարության[2] տեսակներից զատ քիչ չէ նաև ոչ-դեմոկրատական համարվող այլընտրանքների նկատմամբ համակրությունները, որոնք են փորձագետների կառավարումը ուժեղ լիդերի կամ բանակի կողմից:

Ներկայացուցչական ժողովրդավարությունից գոհունակության մակարդակը (որը ընթանում է ազգային կառավարությունների նկատմամբ վստահությանը համաքայլ) բարձր է հարուստ և զարգացած երկրներում, իսկ դա պայմանավորող հիմնական գործոնը կրթությունն է: Ինչպես տեսնում ենք գրաֆիկից ուղիղ ժողովրդավարությունը շատ քիչ է զիջում ներկայացուցչական ժողովրդավարությանը, և այս հանգամանքն ունի իր պատճառները:

Գծապատկեր 4. Կառավարման ձևերից գոհունակության բաշխումը



Աղբյուրը՝ Pew Research Center (38 երկրների միջին, 2017)

Ժողովրդի իշխանության սահմանափակման սուբյեկտիվ դրսևորումնե-

1 http://www.pewglobal.org/2017/10/16/globally-broad-support-for-representative-and-direct-democracy/
2 Ներկայացուցչական ժողովրդավության համակարգում օրենքները ընդունվում են քաղաքացիների կողմից ընտրված ներկայացուցիչների միջոցով, իսկ ուղիղ ժողովրդավության համակարգում հենց քաղաքացիներն են քվեարկում տարբեր ազգային նշանակության հարցերի վերաբերյալ:

ը Հայաստանում

Ակնհայտ է, որ ներկայացուցչական ժողովրդավարությունը կարող է գործել միայն որոշակի նախապայմանների ապահովման պարագայում, որոնց բացակայության դեպքում կասկածի տակ է դրվում ժողովրդավարության արդյունավետության գաղափարը: Ներկայացուցչական ժողովրդավարության առանցք հանդիսացող հանրաքվեների կազմակերպման մեխանիզմների և գործիքակազմի՝ ողջ աշխարհում զարգացմանը զուգահեռ (ընտրական օրենսգրքի բարեփոխումներ, միջազգային դիտորդական առաքելություններ, արդյունքների ստուգման մեթոդիկա և այլն) Հայաստանում ավելի էր կատարելագործվում դրանց շրջանցման հնարավորությունները, և ընտրակեղծարարությունը հասել էր բարձր մակարդակի: Որպես դրա հետևանք Հայաստանում շուրջ երեք տասնամյակ ֆորմալ առումով հաղթած իշխանությունները եղել են ոչ լեգիտիմ: Այս հանգամանքը հանգեցրեց նրան, որ իշխանությունները հետզհետե ավելի ու ավելի հեռացան ժողովրդից և ներկայացուցչական ժողովրդավարությունը գործում էր միայն ձևական և ոչ թե բովանդակային տեսքով՝ հաստատված ավտորիտարիզմը քողարկելու համար: Ուստի, փաստացի, հանրաքվեներից զատ, քաղաքացիական հասարակության մասնակցությունը երկրի կառավարմանը՝ քաղաքական ուժերի միջոցով Հայաստանում դարձավ խիստ անարդյունավետ (երբեմն լրիվ սահմանափակ), և սա ունի իր տրամաբանական բացատրությունը:

Անցած շրջանում իշխող ուժի կողմից վարած իշխանության մոնոպոլացման քաղաքականության տրամաբանական հետևանք հանդիսացավ քաղաքական ուժերի հետևողական դիսկրեդիտացիան ժողովրդի գիտակցության մեջ: Իշխող ուժը քաղաքական դաշտի և իշխանության տոտալ վերահսկման նպատակով ստեղծում էր արբանյակային ընդդիմադիր քաղաքական ուժեր, որպեսզի իր ենթակայության տակ պահեր նաև ընդդիմադիր դաշտը և իրեն ապահովագրեր իրական ընդդիմության ներքո ժողովրդի համախմբումից և դրա անցանկալի հետևանքներից: Ուստի պատահական չէ, որ նաև ընդդիմության նկատմամբ հիասթափությունը առողջ քաղաքացիական հասարակության անդամների մոտ հանգեցրեց անկուսակցականության գաղափարի ամրապնդմանը, ուստի և երկրի կառավարմանը և՛ իշխանության, և՛ ընդդիմության միջոցով՝ մասնակցության հնարավորությունների սահմանափակմանը:

Ժողովրդի կողմից երկրի կառավարմանը նշանակալի մասնակցության մեխանիզմը հիմնականում նախատեսվում է քաղաքական ուժերի միջոցով (անկախության հռչակումից ի վեր ԱԺ-ում հետևողականորեն ավելացվել է կուսակցական ցուցակներով ընտրված պատգամավորների թիվը և նվազեցվել մեծամասնական ընտրակարգով ընտրվածներինը), ինչը մասնակցության ցանկության պարագայում քաղաքացիների անկուսակցականության դիրքորոշման իրավունքը սահմանափակում է: Ավելին, ավտորիտարիզմի ռեժիմում մեծամասնական ընտրակարգը դրսևորվում էր մեծահարուստների և թաղային հեղինակությունների մուտքով ԱԺ:

Որպես վերը նշված գործոնների հետևանք, իշխանության և ընդդիմության նկատմամբ անվստահությունը քաղաքացիական հասարակության անդամների մոտ առաջ բերեց ցածր մոտիվացիա, ինչպես նաև անտարբերություն (այն համոզմունքը, որ «մեկ է բան չի փոխվի»):

Հանրաքվեների շարունակական կեղծումը և արդյունքների կառավարումը ի չիք էր դարձնում քաղաքացիական հասարակությունը ընդդիմության վերածվելու հնարավորությունը:

Հայաստանում ժողովրդավարության ցածր մակարդակի մասին են վկայում տարբեր միջազգային կառույցների զեկույցները: Այսպես, Բրիտանական հեղինակավոր Economist Intelligence Unit (EIU) հետազոտական և խորհրդատվական կազմակերպության հաշվետվության համաձայն Հայաստանում ժողովրդավարության ինդեքսը 2006-2017թթ. ընթացքում գրեթե չի փոխվել և 165 երկրների շարքում Հայաստանը զբաղեցրել է 111-րդ տեղը: Ընդ որում, հատկանշական է, որ նախագահական ընտրությունների տարիներին (2008, 2013) ժողովրդավարության ինդեքսը նվազել է, իսկ զբաղեցրած դիրքը՝ աճել:

Գծապատկեր 5. Ժողովրդավարության ինդեքսի դինամիկան Հայաստանում

Հայաստան	Զբաղեցրած տեղ	Ընդհանուր միավոր	Ընտրական գործընթաց և բազմակարծություն	Կառավարության աշխատանք	Քաղաքական մասնակցություն	Քաղաքական մշակույթ	Քաղաքացիական ազատություններ
2006	110	4.15	4.33	3.21	3.89	3.13	6.18
2008	113	4.09	4.33	3.21	3.89	3.13	5.88
2010	109	4.09	4.33	3.21	3.89	3.13	5.88
2011	111	4.09	4.33	3.21	3.89	3.13	5.88
2012	114	4.09	4.33	3.21	3.89	3.13	5.88
2013	116	4.02	4.33	2.86	3.89	3.13	5.88
2014	113	4.13	4.33	2.86	4.44	3.13	5.88
2015	116	4.00	4.33	2.86	4.44	2.50	5.88
2016	120	3.88	4.33	2.86	4.44	1.88	5.88
2017	111	4.11	5.25	2.86	5.00	1.88	5.59
2018	103	4.79	5.67	4.64	5.56	2.50	5.59

Աղբյուրը՝ Economist Intelligence Unit. www.eiu.com/topic/democracy-index

Գծապատկերից տեսանելի է, որ 2018թ. քաղաքական փոփոխությունները բավականին դրական են անդրադարձել ժողովրդավարությունը բնութագրող գրեթե բոլոր ցուցանիշների վրա:

ՀՀ-ում կատարված հեղափոխությունը փաստացի ամրագրեց սահմանադրության կարևորագույն նորմը, որ իշխանությունը պատկանում է ժողովրդին: Սակայն, արդյո՞ք սա նշանակում է, որ ժողովրդի իշխանության գործնական իրացման մեխանիզմը կամ մասնակցությունը երկրի կառա-

վարմանը արդեն լիարժեք է և բավարար:

Ժողովրդի իշխանության սահմանափակման օբյեկտիվ պատճառները

Ժողովրդավարության համընդհանուր ճանաչում և գործածություն ունեցող մոդելի (ներկայացուցչական) համաձայն՝ ժողովուրդը հանրաքվեի միջոցով պատվիրակում է իր իշխանությունը քաղաքական ուժերին, որոնք պետք է արտահայտեն իր կամքը և ըստ այդմ, կարծես թե ժամանակավորապես «ձեռքերը լվանում է» երկրի կառավարման գործընթացից: Այնինչ, նույն ժողովրդավարության բուն բովանդակությունը ենթադրում է, որ ժողովուրդը՝ ի դեմս ակտիվ քաղաքացիական հասարակության, պետք է **շարունակաբար** մասնակցի երկրի կառավարմանը, հատկապես այն դեպքում, երբ իշխանությունը օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով «կղզիանում» է ժողովրդից և շեղվում է իր նախապես հայտարարած ուղեգծից: Ֆորմալ առումով ժողովուրդը այդ հնարավորությունը որոշ չափով ունի (հանրային լսումներ, ոլորտային քննարկումներ հասարակական կազմակերպությունների, ոլորտը ներկայացնող կառույցների, Հանրային խորհրդի միջոցով և այլն), սակայն այդ գործակցությունը «իշխանություն–ժողովուրդ» կապի համատեքստում ինչ–որ չափով **միջնորդավորված** է, իսկ օրակարգը՝ **կանխորոշված**: Միջնորդավորված է, քանի որ չի կարելի միարժեքորեն ընդունել, որ հասարակական կազմակերպությունները և հանրային քննարկումների ոլորտը ներկայացնող կառույցները ամբողջությամբ են ներկայացնում ժողովրդին, իսկ կանխորոշված է այն պատճառով, որ գրեթե բոլոր բարեփոխումների նախաձեռնությունը գալիս է իշխանությունից, և հակադարձ կապը (ժողովրդից դեպի իշխանություն) թույլ է աշխատում: Եթե քաղաքական ուժերը և նրանցից կազմված իշխանությունը փոխգործակցության տեսանկյունից բաց են, ապա այդ կանխորոշված օրակարգով միջնորդավորված մասնակցությունը երաշխավորված է, բայց ամեն դեպքում բացակայում է այն արդյունավետ մեխանիզմը, որը պարզ կերպով հնարավորություն կտար ժողովրդի ակտիվ զանգվածին (որը մտահոգ է երկրի ճակատագրով) սեփական նախաձեռնողականությամբ մասնակցել երկրի համակողմանի և բազմաոլորտ մասնագիտական կառավարման գործընթացին: Ուստի, նույնիսկ ազատ և արդար ընտրությունների անցկացումը չի երաշխավորում «իշխանություն–ժողովուրդ» լիարժեք, օրգանական կապի ամրությունը, և հատկապես ներքևից վերև անընդհատ կապի անխափան աշխատանքը, քանի որ ներկայացուցչական ժողովրդավարության մոդելը այդ կապի ապահովման տեսանկյունից ունի լուրջ բացթողումներ:

Ներկայացուցչական ժողովրդավարության մեկ այլ **բացթողումներից** է նաև այն, որ դրա հիմնական սկզբունքի՝ այն է՝ ընտրական գործընթացում ընտրողների ձայների հավասարության առկայությունը ձևախեղվում է տարբեր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով, ինչպիսիք են բնակչութ–

յան սոցիալական–տնտեսական ցածր և տարբերակված մակարդակը, գործող բազմապիսի անհավասարությունները (տարիքային, կրթական, իրավական, գիտակցական մակարդակների տարբերությունները), խորհրդային ժամանակներից ժառանգված մտածելակերպը, տեղեկատվության ուղղորդված պրոպագանդան և այլն:

Աշխարհում արդեն տարածում է գտել նաև անհամաձայնությունը ընտրողների ձայների հավասարության թեզի վերաբերյալ, դրա փոխարեն առաջադրելով ձայների կշիռների գաղափարը: Ձայների կշիռներով ընտրությունների մասնակցությունը կարող է հաշվի առնել այնպիսի գործոններ, ինչպիսիք են ընտրողների կրթական և մասնագիտական մակարդակը, նախկինում ընտրություններին մասնակցության ակտիվությունը, քաղաքացիական իրավունքների վերաբերյալ գիտելիքների թեսթավորումը և այլն (Dambisa Moyo, 2018): Ըստ Ջեյսոն Բրենանի առաջարկի (2016) պետք է ներդրվի կառավարման նոր համակարգ – **Էպիստոկրատիան**, որն է կառավարման իրավունքի փոխանցման հնարավորությունը քաղաքական գիտելիքներ ունեցողների կողմից, որոնք կազմում են ընտրազանգվածի մի փոքր մասը միայն: Ուստի, ներկայացուցչական ժողովրդավարությունը, որպես հանրային կենսագործունեության քաղաքական կազմակերպման համակարգ, նույնիսկ իր կատարյալ վիճակում անզոր է ժողովրդավարացման գործընթացում ապահովել բարձր արդյունքներ:

Ուղիղ ժողովրդավարությունը որպես ժողովրդավարացման գրավական

Աղավաղված ներկայացուցչական ժողովրդավարությունը առաջ է բերում դրա բովանդակության փոփոխման անհրաժեշտություն, իսկ դրա իրացման դժվարությունները և տեխնոլոգիական զարգացման արդյունքում ստեղծված ենթակառուցվածքներն ու գործիքները բավարար հնարավորություն են տալիս անցում կատարել ուղիղ ժողովրդավարության կատարելագործված մոդելին:

Ուղիղ ժողովրդավարության միջոցով ժողովուրդը չմիջնորդավորված եղանակով կարողանում է առաջ մղել որոշումներ, առաջնահերթություն տալ դրանց, առաջադրել օրենքներ, ուղղակիորեն ընտրել կամ հեռացնել պաշտոնյաների, սկսել դատավարություններ և այլն:

Օբյեկտիվորեն, ուղիղ ժողովրդավարությունը ավելի տարածված է տեղական և տարածքային կառավարման մակարդակներում և ունի դրսևորման բավականին հաջող օրինակներ՝ Շվեյցարիայում, Կալիֆոռնիա նահանգում: Ուղիղ ժողովրդավարությունը իր բովանդակությամբ պետք է լինի ներառական և թույլ տա քաղաքացիական հասարակության ակտիվ անդամներին, ինտելեկտուալ մարդկանց, մասնագետներին և ընդհանրապես մտածող զանգվածին հանդես բերել նախաձեռնողականություն՝ դառնալով փոփոխությունների և առաջարկությունների հեղինակներ, օրենսդիրներ և

ըստ այդմ անուղղակիորեն նպաստել մերիտոկրատիայի[1] հաստատմանը:

Ուղիղ ժողովրդավարության գործնական կիրարկումը ներկայումս ենթադրում է երկու տեսակ՝ քաղաքացիական (ներքևից վերև) և պետական նախաձեռնությամբ (վերևից ներքև): Առաջինը օգտագործվում է քաղաքացիների կողմից տարբեր հարթակներում ստորագրահավաքների կամ վիրտուալ քվեարկության տեսքով (օրինակ www. Change.org) հանրային լայն հավանություն ստացած հարցադրումների, օրենսդրական նորմերի կամ սահմանադրական բարեփոխումների ուղղակի կամ անուղղակի եղանակով առաջմղման, ինչպես նաև դրանց (կամ քաղաքական գործիչների) հետ կանչի նպատակով, իսկ երկրորդը՝ իշխանության կողմից իրավական կարգավորման և այլ տեսակի որոշումների վերաբերյալ անցկացվող պարտադիր հանրաքվեների տեսքով (օրինակ որևէ համաձայնագրի, տարածքային կարգավիճակի կամ անկախության վերաբերյալ և այլն):

Ակնհայտ է, որ ներկայացուցչականին ժողովրդավարության նվազման պատկերին զուգահեռ՝ ուղիղ ժողովրդավարությունը գալիս է լրացնելու դրան: Սակայն, այստեղ առաջանում են դժվարություններ: Նախ, անհրաժեշտ է ապահովել ներկայացուցչական ժողովրդավարության համակարգում ուղիղ ժողովրդավարության արդյունքների ներդրման կամ ինտեգրման հնարավորությունը: Առավել մեծ խնդիր է այն, որ ուղիղ ժողովրդավարությունը ունի լուրջ սահմանափակումներ՝ ապահովելու իր հիմնական բաղադրիչների (համընդհանուր մասնակցություն, քննարկումների և խորհրդակցության ապահովում, հավասար հնարավորությունների առկայություն) միաժամանակյա համատեղ ներկայությունը: Ջեյմս Ֆիշկինի (2011) առաջադրած «խորհրդակցային ժողովրդավարությունը» մասամբ լուծում է այս խնդիրը՝ քննարկումները ապահովելով որևէ ընտրանքով ձևավորված շահագրգիռ մասնակիցների նեղ շրջանակում:

Ուղիղ ժողովրդավարության լիարժեք դրսևորման համար լայն հնարավորություններ են ստեղծում ինտերնետը և տեղեկատվական տեխնոլոգիաները՝ ստեղծելով էլեկտրոնային ժողովրդավարության հիմքերը: Էլեկտրոնային ժողովրդավարությունը (e-democracy), որը բոլոր քաղաքացիներին հնարավորություն է տալիս ունենալ էլեկտրոնային մասնակցություն, հավասարապես մասնակցել օրենքների առաջադրման, քննարկման և ստեղծման գործընթացին, ի զորու է էականորեն բարձրացնել երկրի որդեգրած ժողովրդավարացման գործընթացի արդյունավետությունը: Էլեկտրոնային ժողովրդավարության վերջնական նպատակը ներկայացուցչական ժողովրդավարությունից անցումն է ուղիղ ժողովրդավարությանը (Fuller Roslyn 2015):

Նախկին իշխանությունը էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման համատեքստում ստեղծել էր էլեկտրոնային ժողովրդավարության գործիքներ (օրինակ e-draft.am կայքը), որոնք չեն նախատեսում վերը նշված՝ ժողովրդից դեպի իշխանությանը (ներքևից վերև) առաջարկների

1 կառավարման սկզբունք, համաձայն որի ղեկավար պաշտոնները պետք է զբաղեցնեն առավել ընդունակ մարդիկ՝ անկախ սոցիալական ծագումից և ֆինանսական կարողությունից:

և նախաձեռնությունների առաջադրում և բազմաֆունկցիոնալ չեն, ինչի հետևանքով ունեն ցածր արդյունավետություն:

Առաջարկվող «ուղիղ ժողովրդավարության» մոդելի բնութագրերը

Քանի որ ուղիղ ժողովրդավարության համակարգը գտնվում է իր կայացման փուլում, ապա Հայաստանի համար նախընտրելի է միջազգային փորձի տեղայնացման կամ ներդրման փոխարեն ստեղծել իր սեփական մոդելը (որը կներառի ներկայացուցչական և ուղիղ ժողովրդավարության մոդելներում առկա թերացումների հնարավոր լուծումները և ազգային առանձնահատկությունները) և հետևողական կերպով զարգացնել այն՝ ապահովելու իր հեղափոխությամբ նվաճած ուղիղ ժողովրդավարությունը և դրա բարեփոխման շարունակականությունը:

Իրավական հարթությունում՝ ի կատարումն ՀՀ սահմանադրության 53-րդ հոդվածի, «ՀՀ հանրագրերի մասին» օրենքի 12-րդ հոդվածը նախատեսում է հրապարակային հանրագրերի ներկայացում էլեկտրոնային միասնական հարթակում, սակայն, ըստ էության, վերը նշված հարթակը գոյություն չունի:

Վիրտուալ հարթակի աշխատանքի արդյունավետությունը կապահովեն առաջարկների **ֆիլտրման, ռեյտինգավորման և բարեփոխման** գործիքները: Այսպես, համակարգը հնարավորություն կտա, որ պետական և հանրային հատվածից եկող բոլոր առաջարկները անցնեն հանրային (հիմնականում մասնագիտական) քննարկում, ընդ որում այդ քննարկողների կարծիքները կունենան տարբեր կշիռներ՝ համապատասխան իրենց մասնակցության ակտիվության քանակի և որակի: Առաջարկները, դրանց վերաբերյալ դիտողություններն ու դիրքորոշումները անընդհատ կքվեարկվեն, կլրամշակվեն և արդյունքում կբարեփոխեն առաջարկը, իսկ ընդհանուր կշռված ձայներով բացասական դիրքորոշում ստացած առաջարկները կամ դիտարկումները կֆիլտրվեն: Արդյունքում, վիրտուալ հարթակում իշխանությանը կմատուցվեն պետական և տեղական կառավարման ոլորտներին, հանրային հատվածին, տնտեսությանը և ընդհանրապես պետությանը վերաբերվող սելեկտիվ, նորարարական գաղափարներ, որոնք կապահովեն երկրի առաջընթաց զարգացումը մերիտոկրատիայի ուղղով:

Եզրակացություն

Հաշվի առնելով նաև, որ հանրության մեջ կուտակված են բազմաթիվ առաջարկներ, այսօրվա հրամայականն է առաջարկների և նախաձեռնությունների վիրտուալ հարթակի ստեղծումը, որը թույլ կտա առաջադրել, արդյունավետ գնահատել, քննարկել, լրամշակել և գեներացնել քաղաքացիական հասարակության «թարմ» մտքերը և գաղափարները, որոնք արդյունքում կօգտագործվեն պետականաշինության գործընթացում՝ երկրի քաղաքական, տնտեսական, սոցիալական, ռազմական, իրավական, առողջա-

պահական, կրթական, մշակութային և հանրային կառավարման այլ ոլորտները բարեփոխելու նպատակով: Առաջարկվող էլեկտրոնային միասնական հարթակը կլինի մասնագիտացված այլընտրանքը հանրության համար սոցիալական կայքերում, լրատվամիջոցներում առանձին հոդվածները և դրանց քոմենթներում արվող դիտարկումները, կարծիքները, առաջարկները, քննարկումները ընդհանուր հարթակ բերելու, դրանց առարկայական տեսք տալու և շահավետ օգտագործելու համար:

Առաջարկվող հարթակի վերջնարդյունքը կլինի անընդհատ թարմացվող նոր օրենսդրական նախագծերի և իրավական ակտերի, գործող օրենսգրքերի և իրավական ակտերի լրամշակման, նոր կամ բարելավված կառավարման մեխանիզմների, ընթացակարգերի, քաղաքացիական նախաձեռնությունների և տարբեր ոլորտներում հիմնախնդիրների լուծումների տեսքով:

Հարթակը կարող է դառնալ ժողովրդավարական կառավարման հզոր մեխանիզմ քաղաքացիական հասարակության ներուժը օգտագործելով երկրի արդյունավետ կառավարման գործընթացում, միաժամանակ ապահովելով «ժողովուրդ-իշխանություն» կապի ամրությունը և փոխշահավետ համագործակցությունը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Հայաստանի Հանրապետության 1995թ. Սահմանադրությունը (2015թ. փոփոխություններով):
2. «ՀՀ հանրագրերի մասին» օրենք (ընդունվել է 2017 թվականի դեկտեմբերի 21-ին):
3. Հանթինգթոն Ս. (1991): Երրորդ ալիքը: Դեմոկրատացումը 20-րդ դարավերջում:
4. Diamond L. (2015).Facing up to the democratic recession, Journal of Democracy, 26/1 էջ 141-55:
5. Dambisa Moyo (2018). Edge of Chaos: Why democracy is failing to deliver economic growth-and how to fix it", Basic Books, էջ 198:
6. Jason Brennan (2016). Against Democracy, Princeton University Press, էջ 204:
7. Fishkin James S.(2011). When the People Speak,Oxford University Press, էջ 33:
8. Fuller, Roslyn(2015). Beasts and Gods: How Democracy Changed Its Meaning and Lost its Purpose. United Kingdom: Zed Books. էջ371:

Էլեկտրոնային ռեսուրսներ

Economist Intelligence Unit. www.eiu.com/topic/democracy-index

Voter Turnout Database, www.idea.int/data-tools/data/voter-turnout

http://www.pewglobal.org/2017/10/16/globally-broad-support-for-representative-and-direct-democracy/ Pew Research Center (38 երկրների միջինը, 2017)

www. Freedomintheworld.org

Завен Ароян
Преподаватель кафедры управления Международного Университета Евразия, кандидат экономических наук

ОСНОВЫ ВНЕДРЕНИЯ ПРЯМОЙ ДЕМОКРАТИИ В АРМЕНИИ

В данной статье представлено регрессивное поведение представительной демократии в последний период и, как практический пример, ее формальное проявление в Армении. В качестве решения проблемы реализации демократии или повышения ее уровня автор предлагает внедрить уникально разработанную систему реализации прямой демократии с соответствующими ее структурами и инструментами.

Ключевые слова: демократия, представительная демократия, прямая демократия, меритократия, эпистократия.

Zaven Haroyan
Lecturer of Management Department at Eurasia International University, PhD in Economics

THE FOUNDATIONS OF DIRECT DEMOCRACY INCULCATION IN ARMENIA

This given article presents regressive demeanor of representative democracy in the last period and as a practical case – its formal way of manifestation in Armenia. As a solution for democracy implementation or promotion of democracy level, it suggests inculcation of a uniquely developed platform of direct democracy, with its relevant structures and tools.

Keywords: Democracy, Representative Democracy, Direct Democracy, Meritocracy, Epistocracy.

Հոդվածը ներկայացվել է գրախոսման՝ 2019թ փետրվարի 1- ին
Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2019թ փետրվարի 28- ին